ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ակադեմիկոս Նորայր Սիսակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված «Կենսաքիմիայի, մոլեկուլյար, ճառագայթային կենսաբանության և գենետիկայի հիմնահարցերը» թեմայով միջազգային գիտաժողովի մասնակիցներին: Գիտաժողովի աշխատանքները և մասնակիցներին ներկայացրեց ակադեմիկոս Ծովակ Ավագյանը:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց հայ ժողովրդի արժանավոր զավակի և մեծանուն գիտնականի հիշատակին նվիրված գիտաժողովների կազմակերպիչներին՝ կարևորելով նման միջոցառումների անցկացումը, ինչը նպաստում է ժողովուրդների մերձեցմանը և փոխհամագործակցությանը: «*Հաճելի է տեսնել, որ այսպիսի առիթները նաև ծառայում են բարի ավանդույթների վերականգնմանը մեր երկու ժողովուրդների գիտական շրջանակներում տասնամյակների համագործակցության և նաև մեր բարեկամության ոգու վերահաստատմանը*»,- նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարևոր նկատեց, որ մեծ գործիչների գիտական ձեռքբերումները վերարժեվորվեն և դրանց արդյունքները ծառայեցվեն հանուն մարդկության առաջընթացի և բարօրության:

Ներկաների անունից շնորհակալական խոսքով Նորին Սրբությանը դիմեց Նորայր Սիսակյանի որդին՝ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միջազգային ինստիտուտի տնօրեն Ալեքսեյ Սիսակյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՄՆ ՀՈՎՆԱՆՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻ ՀԵՏ

Ապրիլի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց նաև ԱՄՆ Նյու Ջերզի նահանգի Հովնանյան միջնակարգ դպրոցի ավարտական լսարանի տասներեք սաներին: Հովնանյան դպրոցում արդեն ավանդույթ է դարձել շրջանավարտների ամենամյա այցի կազմակերպումը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Նորին Սրբությունը Հայրական իր օրհնությունն ու պատգամը փոխանցեց երիտասարդներին՝ հորդորելով մշտապես այցելել Մայր Հայրենիք: Վեհափառ Հայրապետը խորհրդանշական նկատեց դպրոցի սաների այցը Մայր Աթոռ Ավագ Շաբաթվա ընթացքին, անդրադարձավ աղոթքի կարևորությանը հոգևոր կյանքում: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը քաջալերեց երիտասարդներին՝ ուխտագնացության ընթացքում հայոց տարբեր սրբավայրեր այցելելիս իրենց աղոթքը միախառնել նախնյաց աղոթքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ